06/04/2017թ.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն՝ ընտրողների սկանավորված ցուցակները սահմանված ժամկետներում հրապարակվել են: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կայքի աշխատանքը, գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված, առաջացնում էր ստորագրված ցուցակների ներբեռնման դժվարություններ, ցուցակները հրապարակվեցին նաև այլընտրանքային տարբերակով, և 04.04.2017թ. ժամը 18.00-18.30-ի սահմաններում ընդհանրապես որևէ խնդիր առկա չէր: Նշվածի կապակցությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածեց նաև հաղորդագրություն:



Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը ներկայացնում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն: Ժամկետը լրանում էր 05.04.2017թ-ի ժամը 12-ին:

Այս պահի դրությամբ, երբ սահմանված ժամկետից անցել է ավելի քան 12 ժամ, այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումներ տարածքային ընտրական հանձնաժողովներ չեն ներկայացվել:

Ինչ վերաբերում է հանրապետությունից բացակայող քաղաքացի Շուշան Դավթյանի փոխարեն թիվ 1/07 ընտրական տեղամասում կատարված քվեարկության դեպքին, որը ներկայացվել էր Քաղաքացի դիտորդ նախաձեռնության կողմից, պարզաբանում ենք, որ Թիվ 1 տարածքային ընտրական հանձնաժողովին այդ մասին իրազեկել են հեռախոսազանգով երեկոյան ժամը 18-ի սահմաններում:

Ահազանգից անմիջապես հետո տեղի է ունեցել ուսումնասիրություն և պարզվել է՝



Ազգային ժողովի ընտրություններ 02/04/2017

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ քվեարկության ընթացքում տեխնիկական սարքով գրանցված ընտրողների

Ընտրական տեղամաս:	1/07
Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը	899
Այդ թվում՝	
Ընտրողների ցուցակից	899

770, 771, 773, 774, 775, 776, 777, 780, 781, 782, 783, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 808, 809, 811, 813, 817, 818, 820, 821*, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 835, 837, 838, 839, 840, 841*, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 854, 856*, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 866, 867, 868, 869, 871, 875, 876, 879, 884*, 885, 887, 891, 896, 897, 898, 899*, 900, 901, 902, 903, 904, 905, 907, 910, 911, 912, 913, 914, 916, 917, 918*, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 927, 928*, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 945, 948, 952, 953, 954, 955, 956, 958, 960, 961, 963*, 965, 966, 968, 969, 975, 976, 979, 983, 985, 990, 991, 997, 998, 1000, 1001, 1002, 1006*, 1011, 1012, 1013, 1014, 1015, 1016, 1021, 1022, 1024, 1025, 1026, 1032, 1034, 1036, 1038, 1039, 1040, 1041, 1042, 1043, 1046, 1048, 1049, 1050, 1052, 1053, 1055, 1058, 1059, 1061, 1062, 1063, 1064, 1065, 1069, 1070, 1071, 1072, 1073, 1075, 1077, 1080, 1578, 1579, 1580, 1581, 1582, 1583, 1584, 1585, 1586, 1587, 1588, 1589

- քաղաքացի Դավթյան Շուշան Դավթի հանդիսանում է թիվ 1/07 տեղամասի ընտրող և ընդգրկված է ընտրողների ցուցակում թիվ 883 համարի տակ.
- նրա անվան դիմաց առկա է ստորագրություն.



ԵՐԵՎԱՆ ԱՎԱՆ (ՀԻՎ 56 ԱՄԱՆԱԿՊԱՐՏԵԶ ԱՎԱՆ ԱՌԻՆՁ 1 ՄԿՐԾ. 1/14) Ընտրատարածք 1 Թիվ 1/07 ընտրական տեղամաս

Ա/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Հաշվառման վայրի հասցե	Անձը հաստատող փաստաթղթի անվանումը եւ համարը	Ընտրողի ստորագրությունն	Համենախոչորի ընտրողների գրանցման համար պատասխանատու տող անցման ամսաթիվն ու ժամը	Լրացուցիչ նշումներ
883	Դավթյան	Շուշան	Դավթի	08/02/1997	Ավան Առինջ 1 Մկրշ. 2/13 69			83-07512	
884	Ավագյան	Ալիտա	Մարտիկի	17/10/1977	Ավան Առինջ 1 Մկրշ. 2/13 70				

- Տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքից պարզվում է, որ այդ տեղամասում 883-րդ համարում հաշվառված ընտրող Շուշան Դավթյանը տեխնիկական սարքավորմամբ չի գրանցվել.
- այդ տեղամասում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցվել է թիվ 884-րդ համարում հաշվառված ընտրող Ալիտա Ավագյանը.
- ըստ տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալների ընտրող Ալիտա Ավագյանը գրանցվել է ժամը 16:11:42.



- տարածքային ընտրական հանձնաժողովը երեկ երեկոյան այցելել է Ալիտա Ավագյանի բնակարան: Քաղաքացին տանը չի եղել, սակայն ընտանիքի անդամները ներկայացրել են նրա երեխայի օրագիրը, որում ծնողի ստորագրություն մասում նշված է Ալիտա Ավագյանի ստորագրությունը, որը համընկնում է այն ստորագրության հետ, որ դրված է 883-րդ համարի ընտրողի դիմաց:



Նշվածից ակնհայտ է, որ այլ անձի փոխարեն քվեարկության դեպք ընդհանրապես առկա չէ, այլ ստորագրելիս տեղի է ունեցել շփոթմունք և թիվ 884-րդ համարում ընդգրկված ընտրող Ալիտա Սարգսյանը ընդամենը ստորագրել է 883-րդ համարում ընդգրկված ընտող Շուշան Դավթյանի անվան դիմաց: